ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ԼԵՎՈՆ ՇԱՆԹԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Հարուստ է Լևոն Շանթի (1869—1951) նամակագրական ժառանգությունը։ Նա գրել է Հովհ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին, Ա. Ջոպանյանին, Ստ. Լիսիցյանին և ուրիշների։ Առանձնապես մեծ թիվ են կազմում Թումանյանին ուղղված նամակները, որոնցից ստորև հրապարակում ենք 1902 թ. գրվածները։ Դրանք հետաքրքրություն են ներկայացնում ինչպես երկու բանաստեղծների ստեղծագործության, այնպես էլ ժամանակի գրական պրոցեսի ուսումնասիրության առումով։

Ընթերցողին ներկայացվող սույն նամակները պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Հովհ. Թումանյանի ֆոնդում (լրացուցիչ ցուցակ)։ Նամակները տպագրվում են առաջին անգամ։

Գ. Հ. ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

1

1902, ապրիլ 7, Փարիզ

Իմ անգի՛ն Հանես

Նոր վերադարձա նվագահանդեսեն. Պերլիոզի «Ֆաուստը» իր աշխուժ երաժշտությամբը դեռ ականջիս մեջն է. դրական բնազդներս արթնցած. ամենեն սիրուն ժամս գուցե քեզի գրելու. կը վառեմ ճրագս ու կ՝առանձնանամ յոթներորդ հարկի սենյակս. եթե յոթներորդ չէ՛, վեցերորդ կը լինի ա՛նպատճառ, դեռ լավ չեմ համրած, թեև օրը քանի մը անգամ կ՝իջնեմ ու կ՝ելնեմ. համենայն դեպս, այնքա՛ն բարձր եմ, որ շարունակ տրամադրությանս տակն են Փարիզի գեր, նիհար, կզկզված ու շիք, դեմոկրատ ու արիստոկրատ... ծխնելույզները. այնքա՛ն բա՛րձր, որ ճակատս բաց կրնամ ներկայանալ մեր Վերնատունը[2]. վե՛ր, միշտ վե՛ր. այդ չէ՞ մեր Վերնատան աղվոր դեվիզը։ Օ, ես շատ վերերն եմ հիմա. վերե՛ր ու միայնա՛կ. այդ երկուքը անբաժան են, իրարմե։ Ծով Փարիզը իր տենդոտ ու կրքոտ աղմուկովը, շուրջիս եռուզեռումը, ու իմ սեփական ամենօրյա աշխատություններս, դպրոցս, հաշիվներն ու գրքերս բոլորը միասին առած սրտիս օտար ու խառնակ մթնոլորտ մըն է. միգոտ, ուր հոգիս կը հածի տեսակ մը շվարած ու անծանոթի մը կարոտով, ու միայնա՛կ, բոլորովի՛ն միայնակ. ու չի կարծես տրտունջ են այս տողերս. ամենևի՛ն. ով վերերը կը տենչա, պետք է սորվի վերի միայնությանը։ Զգիտե՛ս, գուցե անմիտ ու սնամեջ բառեր են միայն այս բոլոր ըսածներս, բառե՛ր, դարտակ հնչյուն միայն. ներե՛, կարելի է նվագահանդեսի հնչյուններուն ազդեցությանը տակն եմ դեռ։ Ուրիշ անգամ մը ավելի դրական կը լինիմ։

Ի՞նչ պատմեմ քեզի իմ կյանքես և ուրկե՞ սկսիմ. ջրհեղեղե՞ն։ Հունվարի առջի օրերը, իրիկուն մը, ճեպընթացս իր բոլոր ուժովը շոգեպինդ եկավ ու խրեցավ Փարիզ. ամբողջովին գրագետ էի այդ օրերը, վաճառականը քաշվեր կծկտեր էր ներսս անկյուն մը, տեսնելով, որ իրեն շատ երես տվող չի կա-

Մուսայիս հետ թև-թևի ընկեր էի փողոցներն ու թատրոնները, տեսակ մը հոսանքեն տարված, տեսակ մը դրդռված ու տեսակ մը անհանգիստ՝ անորոշ ու տարտամ վիճակես. պետք էր վերջ դնել, պետք էր գրական դառնալ, պետք էր «լուրջ մտածել», և դուն գիտես արդեն, թե ի՞նչ ըսել է մեզի նմաններուն համար» լուրջ մտածելը, օ՜, այդ սարսափելի «լուրջը». և սկսա լուրջ մտածել, ընկա աջ ու ձախ. գտա արդի դպրոցս. հավնեցա, մտա ու սկսեցի աշխատելու, առանց ուշք դարձնելու Մուսայիս բարձրացուցած սոսկալի փոթորիկներուն։ Ալ դավաճա՜ն, ալ անհավատարի՜մ, ալ վա՜տ, ալ ի՜նչ ըսես չնետեց երեսիս. ինծի Անվերսեն հեռացնելեն վերջը խեղճը ալ համոզված էր, որ վերջացավ, որ ինքը հաղթանակած էր վերջնականապես. խե՜ղճ Մուսաս. լաց, աղմուկ, իրար մեղադրել երկու կողմեն. ես բացի Վտակ[3]-ը ու քու մուսայիդ Կռիվը[4] դրի իր առջևը. բայց որու՞ կ'ըսես. ի՞նչ երկարեմ, խնդիրը հասավ ապահարզանի... զրեթե կռվեցանք ու բաժնվեցանք. այս երեք ամիս է զատված ենք իրարմե ու մնացի միայնա՜կ, բոլորովին միայնա՜կ. անկե ի վեր մեկ-երկու անգամ միայն թատրոնը հանդիպեցանք իրարու, բայց ա՜ն ալ, ե՜ս ալ իրար չի տեսնել կը ձևացնեինք, թեև քանի գաղտուկ աչքս կը բարձրացնեմ իր մելամաղձոտ, կիզիչ ու անժուժ հայացքին կը հանդիպիմ, որ իզուր փախցնել կը ջանա. ա՜, այդ վայրկյաններուն եթե գիտնաս ի՜նչ սոսկալի խայթ կ'զգամ մեջս. խա՜յթ ու ամո՜թ ու ստորնացո՜ւմ. ինծի կը թվի, թե իրավ որ դավաճան մըն եմ. թեթևամիտ մը, որ իզուր ու օտար աշխատության մեջ կը վատնեմ ուժերս ու երիտասարդությունս, մեկ կողմ դրած կոչումս ու Մուսայիս ներշնչումները։ Հիմա ալ անով ինծի կը խաբեմ, որ շատը գնաց, քիչը մնաց. արդեն դիտես, որ հոկտեմբերին, գուցե նույնիսկ քիչ մը ավելի շուտ, կը լինեմ հոդ, մեր Վերնատունը, ուր պատիվ կ'ունենամ վավերացման ներկայացնելու երկրորդ դրամաս[5]։ Եթե գիտնաս ի՜նչպես սիրտս դեպի ետ կը ցանկա, դեպի... տուն պիտի ըսեի, որ գրիչս կանգ առավ. տո՜ւն. ու կը ժպտիմ տեսակ մը ինծի հեգնելու, կարծես, կատակելու համար, բայց լեղի է այդ ժպիտը ու կը նախանձիմ անոնց, որոնք «տուն» մը ունին, ուր կրնան դառնալ։ Վերջապես. ինչպես կը տեսնեմ, այսօր սաստիկ սանտիմենթալ եմ տրամադրված. պետք է թոնը փոխել. սակայն այսքանը ճի՜շտ է, որ կարոտով կը հիշեմ մե՜ր կյանքը, մե՜ր շրջապատը, մե՜ր տեղերը, մե՜ր բնությունը, մե՜ր ժողովուրդը. հիմա սկսեր եմ մինչև անգամ ազգային դառնալու. սիրելու համար պետք է հեռանալ, երևի. Նիկոլի ականջը խոսի։ Գալով արդի կյանքիս՝ մեկ բառով ամեն բան կրնամ ըսեր. չոփ-չոր։ Բելժիկ ընտանիքի մեջ էի միշտ. հիմա ա՜յն ալ չունիմ. կ'ապրիմ հյուրանոցը. կ'ուտեմ ռեստորանը <...> Շա՜տ շատ ուրիշ բաներու հետ (հաղագս քսան և չորս գատճառանաց) պետք է երկու բան՝ փո՜ղ և ժամանա՜կ, որ իսկապես ըսած՝ միևնույն բանն են. Փարիզ՝ զվարճության քաղաք է ըսեր են, միայն պետք չէ մոռնալ ավելցնելու՝ փողավորներո՜ւ համար. Փարիզ ամենասիրուն սալոններու և ընկերական ամենասքանչելի շրջանակներու քաղաքն ալ է, միայն... նորեն փողավորներու համար. իսկ անփողներուն բաց է միայն փողոցը՝ իր վարի խավի հաճույքներովը. իսկ ե՜ս, հոգի՜ս, եթե վերինը ունենալ չեմ կրնար, վարինով ալ գոհանալ չեմ կրնար. և կը կարծեմ, որ ինծի նմաններու ամենամեծ դժբախտությունն ալ հոդ է արդեն. վերցո՜ւր՝ ինչ որ կա ձեռքիդ տակը. ատո՜նք են խելացին. իսկ թե մենք իսկապե՜ս ապուշ ենք, այդ նորություն չէ կարծեմ. ապուշ չեղողը, ան ալ մեզի պես ժողովուրդի մեջ, գրագե՜տ կը դառնա։ Կեցցե՜ Վերնատունը։

Վերնատո՜ւնը. ուրեմն նորեն սկսեր է կենդանանալ, ինչպես որ կը գրես. ուրա՛խ եմ. երևի այդ ալ մեր Վերնատան ճակատագիրն է. միշտ **եթեք**-երեք-սիրուն թիվ է, համենայն դեպս. Նիկոլին ու Ավետին ջերմ համբույրներս. ի՞նչ կ'ընեք, ինչի՞ մասին կը խոսիք, ի՞նչ կը ծրագրեք. Նիկոլը աշխատանք ունի՞ գոնե. Ավետի մասին գիտեմ, որ հարցնելն ալ ավելորդ է. ամառը ջրաղաց, ձմեռը հողմաղաց. անոր ջրաղացը հիմա դուն ալ եղար ուրեմն. այնպես որ միակ չմկրտված հեթանոսը ես եմ այժմ. վերադարձիս առաջին պաշտոնս։ Իսկ դո՞ւս, դուս ի՞նքդ. քու բանաստեղծական նամակդ իր երազային ու ծովյալ թոնին հակառակ, շատ ծանր տպավորություն ըրավ վրաս. ուրեմն դուն նորեն հիվանդ ես. կամ էի՜ր, և այդպես երկա՜ր. ի՞նչ է տկարությունդ. միթե ամառը չօգնե՜ց. այնքան անշնորհք ես, որ ոչինչ չես գրած դեռ։ Եվ նյութականդ ի՞նչ օրի է. է՜, ի՞նչ հիմար հարց. կարծես չգիտեմ. գուցե ամենեն աղեկն է խնդրի այդ հիվանդոտ կողմը չի շոշափեմ։ Ուրեմն դառնամ նորեն գրականին. ի՞նչ նորություններ կան հրապարակին վրա որևէ ուշադրության արժանի. դուն ատենոք-ժամանակոք խմբագրական մեծ փոփոխություններու մասին գրելու ինծի սպառնացեր էիր. է՜, սիրելի՜ս, մեր խմբագիրները բոլորն ալ անդամալույծ են, այնպես հեշտությամբ տեղերնուն չեն շարժվիր։ Գարակյոզյանի[6] սիրուն դոն-քիշոտությունը լսած եմ, բայց անոր Swrwq-ի մեջ գրածները չեմ կարդացած. եթե երբեմն-երբեմն Swrwq-ի հետաքրքիր թվերեն մեկ-մեկ ուղարկես, շատ ուրախ կը լինիմ։ Լսած եմ, որ Աղայանի հոբելյանին[7] կը պատրաստվին. մոտեն ոչինչ չգիտեմ, իհարկե կը գրես։ Դերենիկի հետ կապ ունի՞ք հոդ. ես բացարձակապես ո՜չ մեկ լուր չունիմ. հասցեն ալ չգիտեմ, որ գոնե մեկ-երկու տող փոխանակեմ. հետաքրքիր է, գո՞հ է իր նոր վիճակեն, բան դուրս գալո՞ւ է, թե՝ ոչ։

Դե՜, հոգի՛ս, ուշ գիշեր է արդեն, վաղ առտու կանուխ ելնելու եմ աշխատելու, ու նամակիս թուղթն ալ հասեր է իր ծայրին, պետք է վերջ դնել։ Տուր հատուկ բարևս կնոջդ։ Շուտով պատասխանե ինծի, նորեն ամիսներով սպասեցնել մի՜ տար. և վերցո՛ւր ջե՛րմ ու պի՛նդ համբույրներս։

1. Նամակն անստորագիր է։

2. «Վերնատուն»—այդ անվանումն էր ստացել Հովհ. Թումանյանի բնակարանը, որը 1890-ական թթ. դարձել էր Թիֆլիսի հայ, ինչպես նաև այլազգի գրողների հավաքատեղին։

3. «Վտակ»—գրական-բանասիրական ժողովածու։ Լույս է տեսել 1901 թ. Թիֆլիսում, Վրթ. Փափազյանի խմբագրությամբ։ Նվիրված է Գրիգոր Ջանշյանի հիշատակին։

4. Խոսքը Հովհ. Թումանյանի «Պոետն ու Մուսան» պոեմի մասին է, որից մի հատված առաջին անգամ տպագրվել է «Վտակում» (1901 թ.)։

5. Ակնարկվում է «Եսի մարդը» դրաման, որն առաջին անգամ լույս է տեսել 1904 թ. Պետերբուրգում հրատարակված «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի Բ գրքում։

6. Խոսքը հավանորեն Գևորգ Մելիք-Գարակյոզյանի «Գերմանիայի հայ ուսանողությունը» գրքույկի մասին է (արտատպված 1901 թ. «Տարազից»), որի վերաբերյալ «Մուրճ» ամսագրի 1902 թ. № 2-ում գրախոսական է տպագրել Վ. Նալբանդյանը։

7. Ղ. Աղայանի (1840—1911) գրական-մանկավարժական գործունեության 40-ամյա հոբելյանը նշվել է 1902 թ. մայիսին, Թիֆլիսում։

2

<1902, հունիս>[1], Փարիզ

Իմ անգի՛ն Հանես.

Երևի զարմացած ես լռությանս. պա՛ղապես ծուլություն. այս երեք շաբաթ է պարապ-սարապ կը թափառիմ Փարիզ. ո՛չ կը կարդամ, ո՛չ կ'գրեմ. ո՛չ ալ նամակ. քեզի ամեն օր գրել կ'ուզեմ և ամեն օր ետ կը մնա. սակայն չեմ ուզեր Փարիզեն հեռանամ առանց նամակիդ պատասխանը գրելու։ Կիրակի գիշեր է հիմա, Փարիզի վերջին կիրակիս։ առանձնացեր եմ սենյակս ու կը կարդամ անգամ մը ևս քու զույգ նամակներդ պատասխանելիս առաջ. կը կարդամ ու կը մտածեմ։ Չի զարմանաս, եթե ըսեմ, որ մտածումս տխուր չէ, թեև նամակներուդ մեջ տխրեցնող տարրերը չեն, որ կը պակսին. չգիտեմ, իմ տրամադրությո՞ւնս է, քու նամակիդ թո՞նը, թե ի՞նչ, բայց ես ակամա կը խնդամ։ Կ'զգամ շա՜տ խոր, որ ձմեռը խիստ դառն վայրկյաններ ես անցուցեր. նրբազգաց մարդու համար անտանելի տանջանք մըն է քու նկարագրած մանրամասնություններդ. գիտե՛մ. բայց ամեն առավելություն իր հետ իր տանջանքը ունի, հոգի՛ս. քեզի նման կյանքին շատ բարձրեն նայող, հպարտ, մաքուր ու նրբազգաց հոգին բացառիկ է. ու ճիշտ իր բացառիկ ըլլալուն համար ալ պիտի տուժե. սովորական մարդիկը ամեն բան կը ներեն, բայց իրենցմե տարբերվիլը, իրենցմե բարձր թռչիլը չեն ներեր. ու ամեն կերպ կը ջանան, ըլլա դիտակից, թե՛ բնազդաբար, իրենց վրեժը լուծելու... տանջելով. իրավունք չունիս սպասելու, որ անոնք քեզի հասկնան. դուն պետք է, որ անոնց հոգին հասկնաս. եթե հասկնաս՝ կը ներես. և հոգ ալ կը գտնես գուցե անոնց քեզի պատճառած «կյանքիդ թունավորման» հակաթույնը։ Կը տեսնե՞ս, չեմ ըսեր, որ չի տանջվիս շրջապատիդ պզտիկ խայթոցներեն, որովհետև նրբազգաց մարդու համար ատիկա անկարելի է. չե՛մ ալ ըսեր, որ արհամարհես անոնց ծաղրն ու կոպտությունը. կոպիտ սրտերու բաժինն է իրո՛ք արհամարհել կարողանալը. խղճա՛, եթե կ'ուզես, բայց համենայն դեպս համոզված եղիր, որ քու տանջվելուդ իսկական աղբյուրը քու մեջդ է. քո՛ւ առավելություններդ։ Եվ եթե բնական օրենքով մը դուն ալ կ'ուզես քու վրեժդ լուծես անոնցմե, ավելի որո՛շ ու ավելի խո՛ր դարձուր քու ու անոնց մեջ եղած դանդաղությունը։ Այս բարոյական դատողություններեն զատ՝ գիտեմ ես նաև ուրիշ բան մը, որ կրնաս քու հոգուդ առչեը վահան բռնել. անթափանց վահան մը, որուն զարնվելիս բոլոր գծուծ նետերը գետին կը թափին. գրե՛։ Գրե՛. և այն ժամանակ դուն կը բարձրանաս քու աչքիդ, ու այնքան քեզի վերը կ'ըզդաս, որ այդ մանր ցավիկները ծիծաղելի կը գառնան։ Գրե՛, ու ատով լիովին փոխանակած կ'ըլլաս քու փոքրաթիվ ճշմարիտ բարեկամներուդ թե՛ զոհողությունը, թե՛ ակնկալությունը։ Ինծի կը թվի, որ ատոնք են քու պարտատերերեդ ամենեն գլխավորները, որոնց հաշիվը ամենեն առաջ պիտի մաքրվի, եթե քու բարեկամներուդ մոտ գլուխդ բարձր պահել կուզես։ Գրե՛, հո՛գ է քու վրեժդ ալ, քու պարտքերուդ վճարումն ալ, քու կյանքիդ խորհուրդն ալ ու եթե կ'ուզես՝ երջանկությունն ալ։

Շատ լավ գիտեմ, որ նորություններ չեն քեզի գրածներս, գիտեմ նաև քու բոլոր առարկություններդ, որոնց մեծագույն մասը բացարձակապես իրավացի են. գիտե՛մ, բայց և կը պնդե՛մ իմ ըսածս։ Եվ ավելի մեծ անակնկալ, ավելի մեծ ուրախություն չես կրնար պատճառեր ինծի իմ վերադարձիս, քան եթե արժեքավոր տրցակ մը թուղթ դնես առջիս քու գրած-ջնջած խոշոր տողերովդ։ Իսկ իմ վերադարձիս հազիվ երեք չորս ամիս է մնացեր. պետք է

շտապել. և ինչպես դյուրավ կրնաս ենթադրեր, այս տողերս ու կոչս միայն քեզի՛ չէ, որ կ'ուղղեմ, այլ և ինքս ինծի. ես ալ կ'ուզեմ նոր բան մը բերիմ հետս. բացի հինեն, որու մասին արդեն քանի-քանի հեղ գրեր եմ քեզի։ Լոզան երթալուս գլխավոր պատճառն ալ այդ է. հանգիստ, սիրուն քաղաք մը, բնության մեջ. հույս ունիմ տրամադրվիմ ու գրեմ. տեսնենք։ Իմ հաշվովս դուն ալ հիմա արդեն ամառանոցը պետք է ըլլաս. սաստիկ կը հետաքրքրվիմ, թե ինչ կ'ընես, ինչ հալի ես. «Ա՜խ, Վառյա՜դ»[2] ի՞նչ հալի է. սքանչելի՜ կատակ. վիպակիդ շարունակությունը կ'սպասեմ արդեն այս քանի ատեն է, որ չի դար՝ հակառակ տված խոստումիդ. փիս թերթոն-ռոմանիստի պես ինչո՞ւ կեսին յռեցիր. գրե՛ շուտով. կրնաս երևակայեր, որ հետաքրքիր եմ հետևանքն իմանալու, այսինքն՝ հանգույցն ու լուծումը, գրականորեն խոսելով։ Այնքան անշնորհք ես, որ Աղայանի հոբելյանի համար անգամ տող մը չի գրեցիր ինծի. միակ շնորհալիությունդ, մի՛կ ճշտապահությունդ «Ակնա հնությունքն» էին[3], որը ստացած վայրկյանիս կատարելապես ապշեցա, այն աստիճան վստահ էի, որ ստանալիք չունիմ, և գրած էի քեզի միայն պարտքս կատարած ըլլալու համար, խնդրողին ալ այս ամենը նախապես հայտնելես հետո. այնպես որ անոր առջևն ալ ինծի ամոթով ձգեցիր. «վա՜հ, ասկե ավելի ճիշտ ու շնորհքով տղա՜» բացականչեց, երբ գիրքը ձեռքը դրի. բայց իհարկե դուն կ'երևակայես իմ կասկածոտ ու բաղմախորհուրդ գլխու շարժումս։ Ես այդ գրքի փոխարեն անկե ուրիշ գրքեր ստացա, այնպես որ քեզի կը մնա բավականանալ իմ... շնորհակալությամբս։ Ի՞նչ վիճակի է Վերնատունը, վերնականներն ու իրենց վերնահարկերը. մի՞թե ձմեռը ո՛չ մի աշխատություն, հավաքում և այլն չունեցա՞ք, իսկ ես հոս արդեն հող կը պատրաստեմ ուրիշներու առջև, հող պատկառանքի՛ դեպի մեր Վերնատունը։ Թե՞ «անումը կա ամանումը չկա». խայտառակնե՜ր։ Ես այսօր կ'երթամ Chambre-ի նիստին ներկա ըլլալու, արդեն ատոր համար է, որ այս քանի մը օրը հոս ուշացա, իսկ վաղը մնաս-բարով Փարիզ. այնպես, որ հաջորդ նամակս Լեմանի «գեղագվարճ ափերեն»։ Միայն եթե կ'ուզես, որ նամակս ալ Լեմանի նման գեղագվարճ ըլլա, պետք է նախապես ինծի մարդավարի պատասխանես։ Կը տեսնա՞ս, հասեր եմ վերջին միջոցիս, պետք է սպառնամ, քեզմե լուր մը ստանալու համար. դե՛ քեզի տեսնիմ, ամարանոցեդ ինծի այս անգամ ալ ամոթահար ձգե «Հնությունքի» նման. ա՜յդ պայմանով ես միշտ սիրով պատրաստ եմ ամոթահար ըլլալու. հարվածներ կան, որ քաղցր է ստանալը, քընքուշ թաթիկներե նետված վարդի ապտակիկներու նման. ո՜ւ, քանի որ այսպես աննկատելի կերպով «քնքուշ թաթիկներու» ու «վարդերու» սահմանեն ներս եմ մտեր, պա՜ստա՜ հոս ալ կանգ կառնեմ։ Իսկ իմ անթիվ համբույրներս ուղարկած եմ քեզի «օ, Վառյայի» հասցեով. ստացի՛ր անկե։

Լևոն

1. Թվագրվում է ըստ նամակի բովանդակության։

2. Խոսքը Վարյա Խանդամիրյանի մասին է, որը հետագայում ամուսնացավ պատմաբան Հակոբ Մանանդյանի հետ։

3. Հովսեփ Յանիկյանի «Հնություն Ակնա» գիրքը, որ լույս է տեսել 1895 թ. Թիֆլիսում։

3

1902, սեպտ. 6, Լոդան

Հանե՛ս ջան.

Երևի այս վերջին նամակն է, որ կը գրեմ քեզի արտասահմանեն. հավանորեն ամսե մը ճամբա կ'ելնեմ. ուրեմն նամակիս ձեռքդ հասնելեն ամիս մը վերջը կը հասնիմ և ես։ Ձեզ կրնար երևակայեր, թե ի՞նչպես անհամբեր և բոլոր սրտովս շուտ ետ դառնալ կը տենչամ. «ընչի՞» պիտի հարցնես քու սիրուն ընչիովդ, «ընչի՞ կ'շտապես». ինչո՞ւն ես ինքս ալ չգիտեմ, միայն սաստի՛կ, սաստիկ կարոտեր եմ մե՛ր օրը, մե՛ր կյանքը, մե՛ր շրջանը։ Հո՛ս ես մա՛րդ մըն եմ միայն, թի՛վ մը. հո՛դ ես ուժ մըն եմ, գործո՛ն մը. հո՛ս ես օտար մըն եմ, օտա՛ր մը, ինչքան ալ որ ապրիմ, հո՛դ ես իմ տանս եմ. տո՛ւն մը, որ չունիմ, բայց որ իմս է։ Եվ այլն, շարունակությունը բերանացի։ Իսկ առայժմ քանի մը տող իմ արդի կյանքի մասին, այսինքն՝ աշխատանքիս, որովհետև իմ կյանքս աշխատանք է միայն. մինչև հիմա այդպես է եղեր և երևի միշտ ալ այդպես է ըլլալու, և այլն, ասոր շարունակությունն ալ բերանացի։ Գալով արդի աշխատանքիս՝ այնքան ալ գոհ չեմ, քեզի գրեր էի ամառվան ծրագիրներուս մասին, և երևի բերնիդ ջուրերը վազեցին, երբ կարդացիր, որ երկու ամսվան մեջ բոլոր դրամաները իրար եմ խառնելու. է՜, սիրելիս, մի՛ վախնար, բոլոր դրամաներն ալ ձեռքերես ազատված քնած են հանգիստ. արդեն գրվածները սընդուկիս խորքը, իսկ դեռ չի գրվածները ուղեղիս խորքը. միակ բացառությունը նորեն անցած տարվան գրած անտերն է, որ դուրս հանեցի քիչ մը կարգի բերելու, քիչ մը ուղեցի վերջնական ձևին բերեմ, ու ճշմարիտ որ բոլորովին «իրար խառնեցի»։ Ժամանակ չունիմ, հոգի՛ս, մարդավարի աշխատելու, իսկ հապճեպ աշխատանքով, շնորհքով գործ տեսնելու հնար չի կա. միայն կ'սկսիս գրածդ քննադատելու, ջնջելու, իսկ ուղղել, ավելացնել չես կրնար, ու վախենալով, որ ունքը շինելու տեղ աչքն ալ չի հանեմ, նորեն փաթթեցի ու դրի իր տեղը։ Իսկ պետք է ավարտել, որ կարելի ըլլա մարդու երես հանել, ամենեն առաջ մեր Վերնատան, վերջը՝ ընկերության. պե՛տք է, այո՛. բայց... բայց և պետք է շա՛տ մը ուրիշ առևտրա-թղթակցական աշխատանքներ. գիտեմ, որ այս փրոզայիկ բառը շատ անհարկի ներս սպրդելու է վերի գրական տողերուս մեջը. բայց ի՞նչ ընեմ, քանի որ մենք ինքներս այսպես անհարկի ներս ենք սպրդեր անգամ մը առևտուրի աշխարհը։ Որպեսզի այս հռետորական երկարաբանությունես բան մը հասկնալ կարողանաս, շտապեմ քեզի հայտնելու, որ կարծես թե արդեն պաշտոն մը ունիմ գրեթե։ Իհարկե վերջին նախադասությանս երկու ծայրի կարադավոյները քեզի պիտի խրտնեցնեն քիչիկ մը. վնա՛ս չունի, սիրտդ պինդ պահե։ Խնդիրն այն է, որ ասկե երկու ամիս առաջ Կովկաս հանքային տարածությամբ զբաղվող առևտրական տունե մը (որոնց երկու եղբայրները արտասահման հանդիպելու առիթը ունեցած եմ) ստացա շատ սիրալիր առաջարկ մը իրենց տան մեջ արտասահմանյան թղթագրի պաշտոնը ընդունելու. օրական մեկ կամ երկու ժամ աշխատանք. կրնաս հասկնար, թե ի՞նչ աստիճան հաշվիս կու գա. խնդրի բայց-ը միայն հոն է, որ գրեր էին շուտով վերադառնամ. իսկույն պատասխանեցի, թե իսկույն դառնալ չեմ կրնար, պարզապես փողի պատճառով. ես ձեռիս փող պիտի ունենամ միայն սեպտեմբերի վերջերը. և ահա՛ ամիս ու կես է, որ իզուր պատասխանի կ'սպասեմ, և ահա՛ քեզի բանալին այդ վերին գրեթե-ներուն. միայն այսքանը ավելցնեմ, որ ես մեծ հույս ունիմ գործի հաջողելուն. և այլն, ասոր մնացածն ալ բերանացի։ Միայն այս պատմության անմիջական ար-

դյունքը այն եղավ, որ իմ ծրագրիս հակառակ, այս ամառ ալ ստիպվեցա առևտրական աշխատանքի զոհելու. մոտակա պաշտոնս[2] բնականաբար իր պահանջները ունի։ Այնպես որ, ուրեմն, ինծի սպասե՛, համբերությամբ կամ անհամբեր, թողնո՛ւմ եմ քու ընտրությանդ. իսկ ինչ կը վերաբերի դրամաներուս սպասելուդ, առաջվնե քեզի նախազգուշացնեմ, որ համբերությանդ պաշարին տոպրակը մեծ տեսակեն ընտրես։ Իմ այս գրական-առևտրական գոտեմարտությանը ներկա եղած միջոցիս, դուն ալ հոդկե կը գրես, թե դուն ալ ոչինչ չես արտադրեր, չգիտեմ ինչու ինծի կարծես չափ մը ավելի ցավ կը պատճառե. ափսո՛ս, ճշմարի՛տ, ափսո՛ս ինծի ալ, քեզի ալ՝ ափսո՛ս և ամո՛թ ինծի՛ ալ, քեզի՛ ալ։ Եվ այլն. մնացածը բերանացի։ Հանձնարարեր էիր, որ շատ գրեմ ու շատ հարցնեմ քու Վառայիդ մասին. բայց ես մինչև հիմա շնորհքով բան չի կրցա հասկնալ քու այդ ուճի Վարդիդ պատմությենեն, որ ինչպես կ'երևի, շատ փշոտ տեսակեն է ըլլալու[3]. ինչո՞ւ Իսակի[4] «դեղատոմսովը» չես գործի սկսեր. «վարդ մի՛ սիրե, փուշ ունի». ա՜յ, օրինակ՝ Մանիշակ մը, Շուշան մը, Նունուֆար մը, կամ այդ կարգի անվնաս բան մը ընտրեիր. ըսենք ինքը Շուշաններեն շատ խեր չի տեսավ, բայց գոնե Մանիշակի ու Նունուֆարի մասին դեռ ոչ-ոք վատ խոսած չունի, մինչև անգամ բանաստեղծները—ո՛չ։ Իդեպ՝ ո՞ւր է Ավետիքը հիմա և ի՞նչ բանի է. հույս ունիմ, որ առաջիկա ձմեռ գոնե բոլորս միասին կ'ըլլանք, և մեր Վերնատունը հավիտենապես դատապարտված չի մնար միշտ հայր-որդի-ու-հոգին-սուրբե մը բաղկացած ըլլալու։ Շա՛տ-շատ կը ցանկայի, որ հավաքվեինք, սեղմվեինք իրար՝ իրար սիրող, իրար հասկցող մեր խումբը ու քիչիկ մը կենդանացնեինք, տաքցնեինք Վերնատունը։ Նիկոլը գիտեմ որ հոդ է. իսկ Դերենիկն, ինչպես կ'երևի, ջութակը ջիղերուն է դիպեր. ինծի գրեր էին, որ վերադարձեր է նորեն Կովկաս, և որ ջիղերը քիչ մը գրգռված են. ձմեռը ա՜ն ալ հավանորեն Թիֆլիս կը լինի[5]. գուցե մեկ-երկու նորերն ալ ձեռնադրենք. արդեն նոր ընծայացու մեկ թե՞ երկու հատ ունիմ աչքիս տակ. բայց և այլն, մնացածն ալ բերանացի։ Ինծի նայե՛, ես այնպես ծուլություն-մուլություն բան չեմ հասկնար. ոչ ալ այնպես հիմա՛ր տողեր, «թե ես ծուված, խանգարված մարդ եմ», չգիտեմ ինչ. կ'ուզես ծուվի, կ'ուզես շտկվի. ես վերադարձիս քեզմե նյութ կ'ուզեմ. մեր Վերնատանը տրժեք ունեցող, բան մը պիտի ներկայացնես. անպատճա՛ռ։ Նախ դրե՛, վերջը նորեն որչափ կ'ուզես խանգարված մարդ եղիր. մեկը մյուսին չի խանգարեր. իսկական խանգարված, կամ խանգարող մարդ կը դառնաս միայն այն ժամանակ, երբ մեր Վերնատան ընթերցանության նյութերդ ցամքեցնես. գիտես որ ամեն բաներն առաջ և ամեն բաներն վեր մեր Վերնատան ընթերցումներն են. ուրեմն. երեսդ խաչ հանե, և շուտ ըրե՛ վերջացուր, ինչ որ սկսեր ես. վա՜հ, այսպես էլ խայտառակություն. ես հյուսիսեն հարավ, արևելքեն արևմուտք Եվրոպան չափչփեմ ու ամեն տեղ «էղան»[6] կարդամ, թե՝ բանաստեղծ-բանաստեղծ դուն ես որ միայն կաս. և թե շուտով օժտելու ես մեր գրականությունը աննման պոեմով մը[7]. թե ա՜յս, թե՛ ա՜յն, թե՛ չգիտեմ ինչ. և ահա՛ ամենախայտառակորեն կ'նստիս ինծի գրելու, որ խանգարվեր ես, որ... ես քեզի այնպես խանգարվել մը ցույց կ'ուտամ, որ ճշմարիտ որ կը խանգարվիս. դարտակ բառեր գլուխս չի մտներ, նստե՛ աշխատե՛. ընտանիք, ծանրություն, զոքանչեք, պարտքեր, երեխաների ճըզըլթոց, այդ բոլորը շա՛տ լավ, հասկցա՛, բայց ի՞նչ, ես կը կարծես միայն դո՞ւն ես այդպես. գրող-

ներու կեսեն ավելին քեզի պես են եղած. և վերջապես քու քաջությունդ ալ հոն պիտի ըլլա, որ այդ փրողաներուն մեջեն կարողանաս «փոեղիի լույսը ծագեցնես». դուն փոխանակ քու խանգարվելուդ մասին մտածելու ու գրելու, քիչ մըն ալ քու խանգարված փոեմիդ մասին մտածե՛ ու գրե՛. դուն կուզես տակառներով արդարացում դիր մեջտեղը, և կողովներով դժվարություններ, ո՛չ որի համոզել չես կրնար, որ քեզմե չի պահանջեն. և իրավունք ունի՛ն իհարկի պահանջելու, որովհետև քու մեջդ շնորհք կա։ Իսկ ե՛ս, իբրև պահանջող, ամենե՛ն առաջ, որովհետև ամենքին ավելի իոր կը հասկնամ քեզի, կը ճանչնամ հոգիդ, ընդունակություններդ, դժվարություններդ ու արգելքներդ։ Եղի՛ր հիվանդ, եղի՛ր ծույլ, եղի՛ր խանգարված, եղի՛ր տանտեր ու փեսա, վերջապես եղի՛ր ինչ որ սիրտդ կ'ուզե կամ չուզեր, միայն մեջեմեջ գոնե, գոնե երբե՛մն, այնպե՛ս սխալմամբ, եղի՛ր և ա՛յն, ինչ որ քու մեջդ տեսնել կ'ուզեն քեզի սրտանց սիրողները։ Նո՛ւ, սիրելի՛ս, այս ահագին ճառես վերջը, կարծեմ իրավունք ունիմ այլևս քիչ մը հանդստանալու, մանավանդ որ կես գիշերը իր լեն-լեն փեշերը արդեն փռեր է չորս-դին. դե՛, գիշեր բարի։

Եթե այս նամակս առնելուդ պես, անմիջապես ինծի պատասխանես, հոսկե մեկնելու օրերս քեզմե թարմ լուր մը առնելու մեծ հաճույքը կը պատճառես ինծի. իսկ իմ մասիս քեզի լուրեր կու տամ միշտ, թե՛ հոսկե և թե՛ տեղես շարժվելես ալ վերջը։

Աղայանին բարևներս, բարևներս և տիկնոջդ. քանի մը օր առաջ գրած եմ նամակ մը Ֆիլիպին[8]. վստահ եմ, որ արդեն ստացած ըլլալու է. երևի արդեն վերադարձած ես Թիֆլիս, տո՛ւր ուրեմն բարևս իրեն. բարևե՛ և մեր տղայքը, ով որ հոդ կա. և դուն ինքդ ալ ա՛ռ պինդ ու ջերմ համբույր մը՝ քու

Լևոնեդ

Հասցես միշտ նույնը՝ poste restante Lausanne:

Հ. Գ.— Եթե ինծի նամակ գրես, հասցեի հակառակ կողմը գրե և քու հասցեդ. բա՛ն է, եթե քիչ ավելի շուտ մեկնեցա, նամակդ ետ կը դառնա քեզի։

1. Խոսքը Թիֆլիսի դրամատիկական ընկերության մասին է (հիմնադրված 1901 թ.)։

2. Ակնարկվում է Բաքվի մեծահարուստ եղբայրներ Օգանեզովների կողմից Լևոն Շանթին առաջարկված պաշտոնը։

3. Տե՛ս նախորդ նամակի № 2 ծանոթությունը։

4. Ակնարկը Ավ. Իսահակյանի մասին է։

5. Դերենիկ Դեմիրճյանը չութակ նվագել սովորելու համար մեկնել է Մոսկվա, սակայն վատառողջության պատճառով հարկադրված է եղել 1902 թ. վերադառնալ Կովկաս։

6. Մղկիթների բարձունքից մոլլաների կատարած աղոթքը։

7. Ակնարկը դարձյալ «Պոետն ու Մուսան» պոեմի մասին է, որն ամբողջությամբ լույս է տեսել Հովհաննես Թումանյանի 1903 թ. Թիֆլիսում հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուում։

8. Փիլիպոս Վարդազարյան (1858—1935)—Հովհաննես Թումանյանի մտերիմներից, գրական-հասարակական գործիչ։

4

<1902, սեպտեմբեր?>[1], Թիֆլիս

Հանե՛ս ջան։

Օր մըն է, որ Թիֆլիս եմ։ Բալաջարիեն քեզի հեռագրեր էի գալս և կայարանը քեզի չի հանդիպելուս զարմացա. և երբ կինդ պատմեց քու Աբասթումանի մեկնիլդ այդպես շտապ ու ստիպողաբար, թեև աշխատեցա ոչինչ ցույց չի տամ, բայց ճշմարիտ շատ վախեցա., որ հետդ որևիցե լուրջ բան է պատահած լինելու, մանավանդ կնոջդ խոսվածքն ալ շատ կակուղ էր ու միտեսակ, և առանց ինքը գիտնալու ինծի ավելի կասկածի մեջ ձգեց։ Միայն իրիկունը Ֆիլիպի հետ տեսնվելես վերջը հանգոտացա, երբ վիճակիդ մասին պատմեց մանրամասն, և հասկցա, որ կնոջդ այնպես ինքն է քիչիկ մը վախտված։ Մի խոսքով՝ թեև մեկ կողմեն խիստ սառն ջուր լեցրիր իմ վրաս եկա թե չէ քու բացակայությամբդ, որ երևի դեռ շատ երկար է տևելու, բայց մյուս կողմեն՝ բոլոր սրտովս անչափ ուրախ եմ, որ վերջապես քանի մը ամիսներ, հավանորեն գուցե դեռ ավելի երկար պիտի ապրիս քիչ մը հեռու և առանձին, և վերջապես ապահով եմ, որ պիտի վերադառնաս կազդուրված ու առողջ. և կասկած չունիմ թեև դատկն ալ քանի մը նոր աշխատանք։ Թե՛ արդի քու հիվանդությունդ՝ ուժասպառում, ունեցած եմ ես ինքս ալ ժամանակին, թե՛ ուրիշ կերպ առիթ ունեցած եմ մոտեն ճանչնալու, այնպես որ մեկ-երկու խորհուրդներ կրնամ քեզի տալ մասնավորապես աշխատելու վերաբերմամբ. բժիշկիդ ասածներուն մտիկ դի՛ր. հիմա առայժմ զբաղվե՛ որքան կրնաս քիչ, այսինքն, արդեն ուրիշ կերպ ալ չես կրնար. օրկանիզմդ ինքն է քեզի ստիպելու. բայց հենց քիչ որ ուժերդ ետ գալ սկսեն, գրելուդ պահանջը սաստկանա պիտի, մանավանդ որ բոլորովին առանձին ես ու բնության մեջ. արդեն Իշխանուհիին[2] ու Ֆիլիպին դրած նամակներուդ մեջ նկատելի է քու այդ տրամադրության ծլումը. իհարկե շատ ուրախ եմ. միայն թե՛ հիմա, թե՛ վերջը, որքան ալ այն մեջդ ցանկություն զգաս, շա՛տ մի՛ աշխատիր. մանավանդ քանի մը ժամ իրար ետևե մի՛ աշխատիր. դա ամենասպառիչ բանն է. շա՛տ-շատ մի անգամեն ժամուկես, ո՛չ ավելի, ընդհատե՛, անպատճառ, գնա՛ շրջե՛, խոսե՛, բոլորովին ուրիշ բանով զբաղվե. ժամ-ժամուկես վերջը սպարապե նորեն ժամ մը-ժամուկես, եթե կ'ուզես. և ընդհանրապես օրական 5—6 ժամեն ավելի լուրջ մի՛ զբաղվիր. և աշխատե՛ կանոնավոր, մեքենական կանոնավորությամբ, օրվա որոշ ժամերը որոշ կերպով բաժանած. մի՛ ծիծաղիր, հոգի՛ս. անկարգությունը, ոգևորությունը, չգիտեմ ինչը, բոլոր դարտակ խոսքեր են միայն. ամեն բան սովորություն է. և ամեն բան կախված է կենտրոնացումե. եթե անգամ մը սովորություն դարձնես, առտուն կամ իրիկունը նստելու ու մտքերդ կենտրոնացնելու, կը դառնա վարժություն և այդ համբավավոր «ոգևորությունը» կը տեսնես, որ կը գա. լավ է օրական երկո՛ւ ժամ աշխատիս, բայց կանոնավոր կերպով ամե՛ն օր, քան անկարգ կերպով օրական չգիտեմ քանի ժամ. թե՛ առողջության, թե՛ գրական արդյունքի և թե՛ անձնական հաճույքի եռակի տեսակետներով. այս գրածներս ականջի ետև մի՛ նետիր քու սովորական անփութությամբ. փորձե և պիտի գոհ մնաս. հավատա՛, որ մեծ և տևական աշխատանքի գաղտնիքը կանոնավորության և չափավորության մեջն է։ Կը տեսնե՞ս, սիրելի՛ս, քեզի կերպ մը օգնել ուզելու ցանկությունս ինծի մինչև բժշկական ու փիլիսոփայական սահմանները ոտնձգություններ ընելու վտանգին էլ ենթարկեց։

Երեկ Ֆիլիպի հետ այնչափ ծիծաղեր ենք. առաջ ա՛ն, վերջն ալ՝ ես. բանից դուրս է գալիս, որ առանց գիտնալու, ձեզի հիանալի ենթադրություններու օվկիանոսն եմ նետեր, դուք ինծի արդեն նշաններ, կարգեր, տեղավորեր եք. մինչ ես անդին բոլորովին մի ուրիշ աղջկա հետ Զվիցերական լճերու շուրջը կը պտտցընեի իմ սերս. ընկերուհիս դուն չես ճանչնար, բայց ան կը ճանչնա քեզի, իհարկե լսովի, և կը սիրե քեզի շա՛տ, հենց ինքդ-քեզ համար, և երկրորդ էլ, որ իմ մտերիմս ես. մեր գրեթե ամեն ընթրիքին քու կենացդ կը խմեինք, միթե՞ չէիր իմանար. և առաջարկողն ալ միշտ ան էր, որ իհարկե քեզի համար ավելի շողոքորթիչ է. անունը առայժմ քեզի դիտմամբ չեմ տար, իմանալով, որ բերանդ լոբի չի հալիր և ընդհանրապես դեռ ոչ-ոքի ոչինչ մի խոսի այդ մասին, իսկ մանրամասնությունները բերանացի։ Ես քեզի արդեն սաստիկ տեսնել կ՝ուզեմ. կ՝աշխատիմ հաջողցնեմ օր մը-երկու դամ քեզի. ո՛չ անմիջապես, իհարկե՛, հիմա շատ եմ խառն, ու շա՛տ աղքատ. բոլոր հարըստությունս Զվիցերիական լճերուն շուրջը հալեցավ. հապա՛ հիմա սիրել անգամ կարելի չէ առանց փողի։ Շատ դժգոհ ու անհամ, ու ճնշված տարի մը անցուցի Եվրոպա. միայն այդ վերջին երկու շաբաթը եկավ ամեն բան փըրկեց. և Եվրոպայեն հաշտ սրտով կը վերադառնամ հիմա. թե՛ հոս ինչ պիտի դուրս գա, այն էլ տեսնե՛նք. առայժմ հյուրանոցն եմ և այս տողերս[3]...

1. Թվագրվում է ըստ բովանդակության։ Նամակը անստորագիր է, անթվակիր։
2. Խոսքը Մարիամ Թումանյանի (1870—1945) մասին է։
3. Այստեղ նամակն ընդհատվում է։

5

1902, հոկտ. 10, Թիֆլիս

Հանե՛ս ջան։

Գիտե՞ս ուր տեղից կը գրեմ քեզ այս տողերս. մեր համբավավոր Վերնատունեն, ուր սակայն միայն անունն է մնացեր. կապտած ու կողոպտված իր մուզաներեն, իր բանաստեղծներեն, իր շենք ու շնորհքեն. սա Վերնատուն չէ այլևս, այլ իմ բնակարանս. ախր ես հիմա քու կնոջդ нахлебник-ն եմ. հասկանո՞ւմ ես. այսպես թե այնպես դրավեր եմ հիմա տունդ ու տեղդ. առաջ քիչ մը դժվարացա այս քայլը ընելու, ա՛յնպես ավելորդ սկրյուբյուլ գուցե. միայն հիմա ճշմարիտը շատ ուրախ եմ, ինձ բոլորովին իմ տանս եմ զգում, ցավն էն է, որ դուն այստեղ չես։ Վե՜ՐՋապես. ուզեր էիր հասցես, կարծեմ այլևս հասցեի կարիք չունիս. գրե՛ շուտով, տեսնեմ ի՞նչ հալի ես, ի՞նչ բանի։ Իսկ ես՝ ահա՜ երկու խոսքով. առաջինը, որ «անգործ» եմ. իմ պաշտոնը ջուրը ընկավ. և չգիտեմ, թե մինչև երբ շարունակվելու է այսպես. հավանորեն երկար. և քեզի բան մը խոստովանիմ, իմ այս ամբողջ տարվան մը պատրաստությունես, չգիտեմ ինչպես վերջը, հիմա, գուցե իբրև հակազդեցություն, բնավ սիրտ չունիմ առևտրի մեջ մտնելու, դեռ իհարկե հետամուտ եմ. կ՝ուզեի պաշտոն մը ունենամ, մանավանդ գիտեմ, որ անհրաժեշտ է, միայն... միայն ամենևին տրամադրություն չունիմ. ուրիշ խոսքով դարձա, դարձա ու եկա նորեն այն կետին, ուր որ էի հոսկե մեկնելիս, դե՜, հիմա եթե կ՝ուզես խնդա վրաս։ Միայն չեզրակացնես, թե զղջացած եմ գնալուս. ամենևի՛ն. ուրիշ շատ պատճառներեն դուրս բավական է միայն հիշեմ դրամաս և... և

մանավանդ բոմանս, ոչ գրած, այլ ապրա՛ծ։ Սրտիս մեջ ջերմ սեր, գլխիս մեջ հիանալի հիշատակներ, պայուսակիս մեջ դրամա մը, և հեռո՜ւն հեռո՜ւն աղջիկ մը, որ ինձմով կ'ապրի. քի՞չ է. մի՞թե այսքանը չարժեր, որ մարդ տարի մը Եվրոպայի բունջ ու պուճախը չափշփեր։

Քու գրած վերջին քարտդ ստացեր է Գնչուհիս[1] ու պահեր է իրեն. արդեն այդ քարտը նրան շատ էր դուր եկած. դուն ինծի հատ մըն ալ ես ղրկած, կը հիշե՞ս։ Սամակ չանցնիր, որ քու մասին չի հիշե. դուն հիմա անոր ալ այնքան սիրելի ես, որքան և ինծի. կը տեսնե՞ս, անշնո՜րհք, ինչպես քեզի սիրողներուն թիվը ավելցնելու ետևե եմ. հոգիս դուրս եկավ Եվրոպայի բոլոր ծայրերը քեզի համար փրոփականդ ընելեն, և ահա՜, ո՜վ ապերախտություն, կ'ելնեմ կուգամ քեզի, իսկ դուն տունդ, տեղդ թողեր ես ու փախեր. քաշվեր ես սարերը ճգնելու, ո՜վ դու սուրբ Օհան անապատական։ Իսկ ինծի հոս արդեն բոլորովին դրամատուրդ եք հռչակե՛ր, խայտառակնե՛ր. որու որ հանդրպիմ, իսկույն դրամայիցս կը բռնացնեն. եկ ու տես, որ դրամաս էլ դեռ բռնվելիք զատ չէ, որ տեղից որ բռնես թերթը, ձեռքդ կը մնա. այս առտու սկսա «մշակումը» տեխնիկ բառով, գուցե մինչև ամիս մը շնորհքի բերեմ. տրամադիր եմ կանոնավոր աշխատելու, մանավանդ այս Վերնատան մեջ. վերջապես ինչ էլ որ լինի, զգալի է կրկին, որ մուզաները այս տեղով անց ու դարձ են արեր։ Ֆիլիպն էլ հիմա շատ զոռ «մշակելու» վրա է իր վոդրվիլը. ա՜խր հիմա միայն ես չեմ, որ թատերկաթիությամբ եմ զբաղված։ Շիրվանի խաղը անցած գիշեր ներկայացրին. ես դժգոհ չեմ, թեև քննադատելի կողմեր շատ կան իհարկե. բայց «խալխին» դուր չեկավ. իսկ որ գրվածքը անտարակույս գեղարվեստական արժանիք ունի, ոչ մեկ կասկած չի վերցներ. և ըսածիս ապացույցն էլ ա՛յն, որ Մշակ-ը սկսավ հայհոյելու[2]։ Վերջացնում եմ շտապելու համար Իշխանուհու մոտ, ուր ժողով է այս իրիկուն. ինձ է հատկացված քու վականտ թողած աթոռդ։

Համբույրներս՝ Լևոնդ

1. Նկատի ունի իր ապագա կնոջը՝ մանկավարժ Ջավո (Ջավահիր) Ներսեսյանին, որի հետ ամուսնացել է 1903 թ. Շվեյցարիայում։

2. Խոսքը Ալ. Շիրվանզադեի «Ունե՞ր իրավունք» պիեսի մասին է, որը ներկայացվել է Թիֆլիսում 1902 թ. հոկտեմբերի 7-ին։ «Մշակի» 1902 թ. № 223-ում հիշյալ դրամայի մասին տպադրվել է Հ. Առաքելյանի «Մի նոր պիես» խորագրով թատերախոսականը։

6

<1902, հոկտեմբեր 16—20, Թիֆլիս>[1]

Հանե՛ս ջան։

Մի փոքրիկ թյուրիմացություն կա մեր մեջ. այսինքն ժողովի ու քու։ Դու նորից բռնել ես քու հին երգը. «սպասեցե՛ք մինչև նոր ու ավարտած գործ ունենամ հրապարակ հանելու»։ Մինչդեռ հիմա խնդիրը քու արդեն իսկ ունեցած և ամենամեծ մասով արդեն իսկ հրատարակվածի երկրորդ ամփոփ ու վերստին տպագրության մասին է. մեկ կողմեն ավելի լայն շրջանի մեջ քեզ ծանոթացնելու, և երկրորդ, ու մանավանդ այդ առիթով, քեզ մի որևէ նյութական ապահովություն ձեռք բերելու համար։ Կից նամակը քեզ խնդիրը երևվի ավելի կը պարզե. թե՛ այդ կերպով և թե՛ Իշխանուհու և ա՛յլ մեկ երկու

միջամտությամբ գրեթե հաստատ հույս կա, որ այդ անունով՝ «գրքերուդ հրատարակության ի նպաստ», մի բավական խոշոր գումար գոյանա։ Մի 2—3 ամսից, և հավանորեն դեռ ավելի, հազիվ բաժանորդների թիվը հայտնի լինի, ուրեմն՝ դեռ առնվազն երեք ամիս ունիս մինչև հրատարակության սկսելը. ինքը հրատարակությունն ալ նորեն մեկ-երկու ամիս. այնպես որ դեռ տրամադրությանդ տակ 6 ամիս ժամանակ կա. այլևս ինչ բծախնդրություն է դա. «նախ պատրաստ լինի, վերջը կը հրատարակենք». իհարկե պատրաստ չեղած բանը չի հրատարակվիլ. առայժմ միայն գործի արտաքին, առևտրական մասն է, որ սկսիլ կ'ուզենք. և դրա համար է, որ քու վստահելի բարեկամներուդ ցանկը խնդրած էինք քեզնից. և խնդրում ենք հիմա էլ. ուղարկե՝ շուտով։ Թե՞ կարծում ես, որ 5—6 ամսվան մեջ էլ պիտի չի կըրնաս արդեն հրատարակած երկերդ կարգի բերես, և անտիպներդ էլ վերջնական ձևի։ Կը կրկնեմ, նույն իսկ իբրև գրագետ, որ հին ոտանավորները շատ ջնջել ու ջնջոտելը անարժեք բան է. պոեմների խնդիրը, իհարկե, այլ է, բայց նրանք էլ միևնույն է, երբեք չի կարելի ավարտած համարել քու այդ աշխատելու եղանակը աչքի առաջ ունենալով, տասն անգամ էլ որ տալվի, դու նորից ջնջես ու ջնջոտես պիտի. «Սաքո»-դ ու «Անուշ»-ը քեզի օրինակ. հետևապես երկրորդ թե երրորդ վարիանտդ է մտնելու այս հավաքածուին մեջ, բոլորովին նույնն է։ Եվ վերջապես նորություն տալու քու սկրյուբյուլն էլ ավելորդ է. մեկ-երկու պոեմ գրեթե բոլորովին փոխած ես, և իմ գիտցածովս երեք թե չորսն էլ նորը ունիս. մինչև անգամ, ինչպես ըսին, սկսեր ես նոր մանր ոտանավորներ էլ գրելու. այս անգամվան համար հերիք է. ավելի երկար աշխատանք պահանջող գործերդ թո՛ղ մնա ուրիշ անգամի։ Բոլոր խալմաղալը է՛ն է, որ շուտով գործը գլուխ դա. քիչ ձեռքդ փող անցնի, քեզ քիչ ավելի անկախ ու ապահով զգաս, մտածես քու վերջնական ապաքինմանդ մասին ու հանդիստ քու աշխատանքդ շարունակելու։ Հա՜, ապաքինում ասի, միտս եկավ. Իշխանուհին նեղացել է քեզնից, և ուղղակի պահանջում է, որ Օխյանների[2] մոտ այլևս ել ու մուտ չանես։ Ա՜խր, այդ աստիճանի էլ հիմար կարելի է լինել, տղա՜, դիտես, որ կուրծքդ նեղ է, ու թոքերիդ վերին մասերը բոլորովին թույլ. ուրիշ խոսքով պատրաստ հող պացիլների հյուրընկալության. քու բոլոր ջանքդ լինելու է սնունդով, հանդիստով ու մաքուր օդով ավելացնես ու թարմացնես կենսական ուժերդ՝ առողջությունդ վերջապես ապահովելու համար. իսկ դուն գնում ես այն տեսակ տներ, ուր ամբողջ ընտանիքը հիվանդ է, նրանց հետ նստում ես սեղան, ուտում ես այն դդալով ու այն բաժակից, որ երեկ ով գիտե որու շրթունքին էր. ա՜խր, մարդ ուղղակի անխելք պիտի լինի։ Եվ դեռ անցած օր երկար-բարակ քարոզներ էիր գրել Ֆիլիպի նամակին մեջ, երեխաներիդ կարոտի ու սիրո մասին. դարտակ բառեր են. եթե դուն իրոք կը սիրես քու երեխաները, մի քիչ ավելի մտածիր քու սեփական առողջության մասին։ Փոխանակ չեղած տեղից քեզ հոգ ու մտածմունք ավելացնելու, գիշերը անքուն անցընելու ու չգիտեմ ուրիշ ինչ հիմարություններ անելու՝ նայե՛, որ ուտես, քնես ու կազդուրվիս շատ չափավոր աշխատանքով. հոգ ու մտածմունքի բնավ կարիք չկա. հիմա, փա՜ռք Աստծու, քու տանդ եմ. երեխաներդ բոլորն էլ։ բողկի պես. տանդ պակաս չի կա. կինդ էլ չի Երևում, որ խիստ դժգոհ լինի, մի դինջացի՛ր էլի։

Նո՜ւ, հիմա որ հայհոյեցի պրծա ու սիրտս քիչ հանգստացավ, հիմա համբուրում եմ քեզ ու սպասում նամակիդ։ Ես ինձ շատ լավ եմ զգում քու

տանը, դու հեչ դարդ մի՛ արա։ Աշխատում եմ դրամայիս վրա, որ այս տարի երևի բեմի լամպերու լույսին կ'արժանանա։ Նյութականս առայժմ բանաստեղծավարի, բայց հույս ունիմ շուտով առևտրական ոտքիս վրա անցնելու։ Իսկ գնչուհուս մասին ինչ գրեմ քեզ, հոգի՛ս. գրելու ոչինչ չունիմ, բայց պատմելու շա՛տ, շա՛տ-շա՛տ. իշտահդ պահե մեր հանդիպումին. ամեն նամակին մեջ քու մասին կը հարցնե, իհարկե, թեև անձամբ քեզ չի ճանչնար, ինչպես որ արդեն գրած եմ կարծեմ։ Պատասխանդ մի՛ ուշացներ. նմանապես ցուցակը, որ հաջորդ ժողովին ներկայացնեմ։ Ահա՛ և այն նամակի օրինակը, որ ցրվելու ենք «մոտիկ» մարդոց.

«Հարգելի պարոն, մե՛նք, Հ. Թ. գրական տաղանդը գնահատողներս, ձեռնարկում ենք նրա տպված ու դեռ անտիպ երկերի հրատարակությանը, հուսալով, որ արդյունքովը կարողանանք մի քիչ ապահովել ահագին ընտանիքով ծանրաբեռնված, այժմ էլ հիվանդ մեր համակրելի գրագետի ապրուստը, և միջոց տալու նրան, որ կարողանա արտադրել ու աշխատել իր կյանքի այս ամենահասուն տարիների մեջ։ Թե՛ մեր հայ գրականության, թե՛ բանաստեղծի և թե՛ նրա համակրողների տեսակետից մենք շա՛տ ավելի խելացի ու բնական ենք համարում այժմ, նրա ուժերի հասուն ու թարմ ժամանակը, նրան ձեռք տալու միջոց, քան սպասելու, որ նրա ծերության ու այլևս արտադրելու ապարդյուն օրերի մեջ միայն հասարակությունը գա իր համակրանքն ու օգնությունը մատուցանելու։

Մենք մեր այս ձեռնարկին մեջ մեր հույսը բնականաբար դրած ենք Հ. Թ. հարգողների ու բարեկամների վրա, որոնց թիվը ինչպես մենք վստահ ենք, փոքր չէ։ Ձե՛ղ էլ, հարգելի՛ պարոն, համարելով մեր բանաստեղծով մասնավորապես հետաքրքրվողների թվում, ահա՛ դիմում ենք Ձեզ՝ խնդրելով ամեն կերպ աշխատեք հնար եղածին չափ բաժանորդների թիվը ավելացնելու։ Աչքի առաջ ունեցեք, որ «հրատարակության ի նպաստ» կարող եք նաև բացիկ նվերներ ընդունել։ Այդ նվերները որքան խոշոր լինին և որքան շատ, այնքան մեծ կը լինի բնականաբար և հեղինակին հասանելիք զուտ արդյունքը։ Այս երկրորդ կետը մենք մասնավորապես հանձնարարում ենք Ձեր ուշադրությանը։ Գիտե՛ք անշուշտ, որ այս տեսակ դեպքերում ինչ մեծ դեր ունի մոտիկ մարդոց մասնավոր ջանքն ու տակտը. և ճիշտ դրա համար է, որ մենք դիմում ենք Ձեզ, վստահ լինելով, որ չէք զլանա Ձեր աջակցությունը ամեն կերպ նվիրելու այս գործին, որ մենք Ձեր սրտին այնչափ մոտ ենք կարծում, որչափ և մեր։

Ամեն տեսակ թյուրիմացության առաջն առնելու համար ավելացնենք, որ հրատարակիչները ո՛չ մի դրամական շահ չունին գործին մեջ. հրատարակության անմիջական ծախքերից դուրս, բոլոր մնացած գումարը հեղինակի սեփականությունն է։

Գրվածները կը հրատարակվին բոլորը միասին ամփոփված մեկ հատորի մեջ, որու բաժանորդագինն է գեղեցիկ թղթի վրա ու փառակազմ՝ տասը ռուբլի. սա կը լինի շատ սակավաթիվ և ամեն օրինակը թվագրված։ Իսկ անկազմ ու լավ թղթի վրա՝ բաժանորդագինը երեք ռուբլի։

Թե տպագրության և թե արտաքինին մասնավոր խնամք կը տարվի։

Տպագրությունը կ'սկսի երկու-երեք ամսից[3]. դա կախված է, թե երբ հայտնի կը լինի մեզ բաժանորդների մոտավոր թիվը։ Եվ հենց դրա համար էլ կրկնակի խնդրում ենք Ձեզ՝ շարժիք որքան կարելի է շուտ, և ուղարկեք

մեզ Ձեր ջանքերի արդյունքն ու հաշիվները որքան կարելի է շո՛ւտ։ Ընդունեցեք և այլն...»[4]։

1. Նամակն անստորագիր է։ Թվագրվում է ըստ բովանդակության և Հովհ. Թումանյանի՝ Մարիամ Թումանյանին (1902 թ. հոկտեմբեր 14) և Փ. Վարդազարյանին (հոկտեմբեր 23-ի) Արասթումանից գրած նամակների հիման վրա (տե՛ս Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Նամակներ, Երևան, 1945, էջ 228—230)։

2. Նկատի ունի Թումանյանի մտերիմներից մեկին՝ իրավաբան Արսեն Շեյանին, որն իր կնոջ հետ եղել է Արասթումանում։

3. Խոսքը դարձյալ բաժանորդագրությամբ հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուի մասին է, որի հայտարարությունը տպագրվել է «Մուրճ» ամսագրի 1903 թ. № 6-ում (էջ 168)։

4. Այստեղ նամակն ընդհատվում է։

7

1902, հոկտ. 23, Թիֆլիս

Հոդի՛ ջան։

Այս անգամ ոչ իբրև «առյուծիկդ» եմ գրում, ո՛չ էլ իբրև ժողովի անդամ, այլ գրում եմ իբրև քու Լևոնդ։ Նամակդ նոր ստացա և պատասխանում եմ անմիջապես. գնչուհուս էի գրելու, թողի ու գրում եմ քեզ. կրնաս ուրեմն եզրակացնել, թե որչափ սրտիս կպավ քու գրածդ։ Ցավն այն է, որ ես քեզ հասկանում եմ հիանալի կերպով, զգում եմ քու հոգեկան ճնշումդ, զայրույթդ ու վիրավորվելդ. և քու պատասխանդ գիտեի գրեթե քու գրելուցդ առաջ. սրտիս խորքը, ընդհանրապես ասած, չեմ կարող քեզ իրավունք չի տալ, թեև երկրորդական կետերի մեջ ես քիչ ա՛յլ կերպ եմ մտածում։ Բայց որքան որ քիչ եմ հասկանում, այնքան էլ հասկանում եմ «նրանց», որոնք քեզ բոլոր սրտով օգնել են ուզում, քեզ համար մի բան անել են ուզում։ Խնդիրը իր բոլոր մերկությամբը սա՛ է. դու տաղանդ ունիս, արտադրել կարող ես, ուրիշ «գործի» անպետք ես, այժմ էլ հիվանդ. քեզ ապրուստ պետք է. քեզ փող պետք է, որ ընտանիքդ քիչ ապահովես, որ ապրիս ինքդ, կազդուրվիս վերջնականապես և կարողանաս աշխատել։ Թողնել, որ ապրես ու քարշ գաս այնպես ինչպես մինչև հիմի՝ այդ կը նշանակե ձեռք վերցնել թե՛ քու առողջությունդ և թե՛ քու գրական շնորհքդ։ Ուրեմն մի ելք պիտի գտնել. և քու «բարեկամներդ» մտածեր են ահա այդ հրատարակությունը, որ ամենից ավելի դրական վերարկու է տալիս փող խնդրելուն. որովհետև վերջապես «փող պիտի խնդրվի». որովհետև երեխա չես և շա՛տ լավ պիտի հասկանաս, որ գրքերդ, եթե իրենց հալին թողնեն որ ծախվի, կամ հենց եթե զոռով էլ որ տարածեն, հազիվ կարող են իրենց հրատարակության ծախքը փակել. այդ մենք հաշված ենք, քեզ համար էլ դժվար չէ հաշվելը։ Ուրեմն կա՛մ ոչինչ չի պիտի անել, կա՛մ «փող պիտի խնդրվի». խնդիրը ինչպես-ին մեջն է. եթե ինքդ ավելի լավ միջոց մը գիտես, հայտնե՛. ես ճշմարիտ չգիտեմ. և երևի «նրանք» էլ չգիտեն, որ եկեր ու կանգ են առեր հրատարակության վերարկուին տակ։ Պարզ է, հոգի՛ս, որ այս բիլյուները հեշտ չէ քու զգայուն հոգուդ համար կուլ տալը։ Ի՞նչ կարող ես անել. չէ՞ որ, դժբաղդաբար, մինչև հիմի էլ արդեն այդ դրության մեջ ես գտնված. միթե շարունակ ստիպված չե՞ս եղած աջ ու ձախից

խնդրելու». մեր ճակատագրի դառնությունն է այդ, ի՞նչ կարող ենք անել։ Եվ վերջապես մի քիչ էլ փիլիսոփայաբար մտածե՛. շատ ես կարևորություն տալիս մանրիկ որդերու տալիք դատողությանն ու նրանց չարությանը։ Վերջապես մի քիչ լուրջ մտածե՛ և գրե՛ ինձ, թե դու ինքդ ինչպես ես ուզում. ես էլ դրա համեմատ դիրք բռնեմ այստեղ. ես հիմա մի տեսակ քու ներկայացուցիչդ եմ դարձեր, առանց իմ ուզելուս. հենց նրա համար երևի, որ բնազդորեն զգում են ինչպես ես եմ քեզ հասկանում, իրենք չեն կրնար հասկնար։ Միայն խնդիրը իր բոլոր մերկությամբը դի՛ր քու դեմդ. ուզո՞ւմ ես, որ քեզ թողնեն այնպես, ինչպես մինչև հիմա էիր, ու չի մտածեն քեզ համար փող ճարելու. եթե դու կտրուկ կերպով այսպես ես վճռած, դո՛ւն գիտես, բայց ես սաստիկ պիտի ցավիմ, որովհետև դա ասել է քու առողջությունիցդ ու շնորհքիցդ ձեռք վերցնել, ինչպես որ ըսի։ Եթե դուն համաձայն ես, որ քեզ համար մի բան ընեն, ուրիշ խոսքով «փող ճարեն». որովհետև, սիրելի՛ս, քու բարեկամներդ ուզում են «փող ճարել», ես իրավունք չունիմ մեջ մտնելու այդ տեսակ հարցերի, թե այլևս «շատ երկար ես ծանրացեր նրանց վրա», թե «ուզում են քիչ թեթևանալ» և այլն. ես այդ չգիտեմ, և դրա մասին չեմ էլ ուզում խոսել. գիտեմ միայն, որ նրանք ուզում են քեզ համար «փող ճարել». և եթե համաձայնես մի 3—4 հազար կրնան ճարել, իրենց խոսքով։ Ես ինքս անձամբ քեզ համար վիրավորական ոչինչ չեմ գտնում. այլ նույնիսկ մի տեսակ ընդհակառակը, միայն, իհարկե, եթե դուն վարժվիս մանր մարդոց մանր ակնարկներին մի քիչ ավելի բարձրից նայելու։ Գրե՛ ինձ պարզ. խնդրի էականը սա՛ է. թե՛ հրատարակչական, թե՛ խմբագրական, թե՛ ժամանակի, թե՛ վաղելու խնդիրները երկրորդական են և կարգադրելը դժվար չէ։ Ես կ'ուզենամ գիտնամ քու կամքդ, որ հանկարծ քեզ մտերմություն անելու ցանկությամբս քու սրտիդ հակառակ եղող մի ապուշ դիրք չբռնեմ։

Համբույրներով Քու Լեոնդ

8

1902, նոյեմբեր կարծեմ 7, <Թիֆլիս>

Հանե՛ս ջան։

Երբեք պատահե՞լ է քեզ, որ սիրած աղջիկդ կամ կինդ մի խոշոր հիմարություն կատարած լինի, և եթե դու քու դժկամությունդ արտահայտելու պատրաստվելու վրա լինես՝ ունքերդ կիտած, պատահե՞լ է քեզ, որ հանկարծ չարաճիճի կատակ մը շրթունքին՝ նետվել է նա քու վիզդ անփո՛ւյթ, աղա՛տ և ուրա՛խ, և դու հանկարծ նկատել ես, որ քու շրթունքներդ իրենց գայլի քարոզները բոլորովի՛ն մոռցած, բոլորովի՛ն տարբեր մի գործով են զբաղված արդեն. ահա՛ նույն հոգեկան զգացումն ունեցա, երբ վերջին զվարթ նամակդդ առի. նո՛ւ, վերջապես մի քանի պայծառ տող գրեցիր ինծի։ Քեֆդ նայե՛. սիրելի՛ս, բոլորը գարտակ բաներ է. կը կարգադրվի ամեն բան իր կարգովը. քու «գործերիդ» մասին կը խոսինք մանրամասն, երբ դուն գաս, եթե շուտով գալու ես. իսկ եթե ավելի երկար մնաս հոդ, որ ես սաստիկ կը ցանկամ, այն ատեն հավանորեն մեկ-երկու օրով ես կուգամ քեզ. նամակով իրար բան հասկցնելը շա՛տ է դժվար. կա՛մ ծուռ է հասկացվում, կա՛մ շատ դրաժիկ։ Իսկ հիմա ապրե՛ քու քեֆիդ, ո՛չ մեկ բանի մասին մի մտածիր, բացի քու կազդուրումդ. քիչից-միջից աշխատե՛, եթե ախորժ ունիս. ուրիշ ոչի՛նչ. որ

մուսադ սկսել է քեզ հաճախել, իհարկե, անչափ ուրախ եմ. մաղթում եմ ավելի հաճախակի վիզիտներ։ Իսկ ես քու տանդ թագավորում եմ հիմա. ամբողջ Վերնատունը իմ գայիսոնիս տակն է. մուսաներն էլ ծակերից ու ծուկերից երբեմն ներս են նայում, բայց որովհետև քամիներն էլ մուսաներից ո՛չ պակաս աներես են, կնոջդ հետ այսօր բոլոր ծակերն ու ծուկերը բամբակ կոխեցինք. և երևի այդ է պատճառը, որ խեղճ մուսաներս այսօր չեն կարողանում ներս գալ. որչափ ուզեցի աշխատեմ՝ բան դուրս չեկավ, բայց ընդհանրապես դժգոհ չեմ աշխատանքես. աշխատում եմ ավարտեմ դրամաս. խաթա-բալա դարձավ. արդեն ամեն կողմ դավ են արել, մարդու հետ չեմ կարող հանդիպել, իսկույն դրամայիցս են հարցնում ու զահլաս տանում են, կանգնի՛ր և ամեն մեկի տափակ դատողությունները լսիր. ես երևակայում եմ, թե դեռ ի՞նչ սքանչելիքներ եմ լսելու, երբ խեղճ դրվածքս «բեմի լույսերուն» ներկայանալու արժանանա. մեկ խոսքով, շատ զոռ տեսակից ինձ դրամատուրգ են շինել արդեն, թեև ո՛չ-ոք ո՛չ կարդացած է, ո՛չ տեսած. տեսնո՞ւմ ես, ի՞նչ հեշտ բան է հայոց ազգի դրամատուրգ դառնալը. երբեմն մտածում եմ մի լավ օյին խաղամ խալխի գլխին, իմ սրբագրությունը դառնա անվերջ, ու բան չունին թող սպասեն։ Ինձնից ո՛չ պակաս տքնում է և Ֆիլիպը իր վոդվիլի վերա. ամեն չորեքշաբթի մեզ ներկայացնում է մի նոր վարիանտ, և դեռ ոչինչով չի կարելի ապահովված համարել, որ հասած ենք վերջին վարիանտին։ Մեր չորեքշաբթիի «նիստերին», չգիտեմ զգում ես թե ոչ, բայց միշտ ներկա ես և գուն. ամեն մեկը բերում է քեզնից ստացած նամակները և կարդում է խորին լռության մեջ, խորին երկյուղածությամբ և քիչ է մնացեր՝ «հոտընկայս»։ Կարդում ենք նաև դրսից ուղարկված դրամաներ. ամեն չեշիտը կա, գավառից, քաղքից, a la Շեքսբիր, a la Իբսեն և a la ոչինչ. ամեն բան կա, մեջը ու ամեն տեսակը, միայն մեկ բան չի կա. գեթ մի քանի կոպեկի գրական արժանիք. խեղճ բրիկաշչիկներ ու չդիտեմ ուրիշ ինչեր, որոնք հաշորդ օրը, ո՞վ գիտե ինչ սրտի տրոփումներով գալիս են Իշխանուհու մոտ իրենց «դատավճիռը» լսելու. ակամա մարդու ծիծաղն է գալիս, բայց մի ծիծաղ, որի տակը դառնություն կա սլահ մտած. և երբ մտածում եմ, թե ինչքա՞ն-ինչքա՞ն մարդիկ կան, որոնք կաշվից դուրս են գալիս, որ գրագետ դառնան, կամ դերասան, կամ երաժիշտ, ու այս մտածումը մի տեսակ եսական հաճույք է պատճառում ինձ. ուրեմն միայն փողն ու հանգիստը չէ, որ քաշում է մարդոց, նույնիսկ շատ «խելացի» համարված մարդոց. ուրեմն մենք էլ մեր բոլոր տանջանքների հետ նախանձելի ենք դեռ շա՛տ շատերի համար. դա էլ վերջապես մի բան է, թեև իհարկե վայրկյաններ են գալիս, որ բոլոր սրտովս կը ցանկայի, որ փոխանակ նախանձելիի՝ գրպանս լի լիներ։ Նո՛ւ, կարծեմ, սրա վրա էլ կարելի է վերջակետը դնել։

Ջերմ համբույրներով՝ Լեոնդ

9

<1902, նոյեմբեր, Թիֆլիս>[1]

Հանե՛ս ջան,

Այս անգամ զուտ պաշտոնական. վեստոնիդ կոճակները կոճկե՛։ Թումանյանցի բանաստեղծությունները հրատարակող սիրողներու... (վա՛յ, կը ներես, գրիչս սխալեցավ) համակրողներու խումբը իր երեկվա նիստին մեջ

կայացրած վճիռներեն երկուսը հանձնեց ինծի, որ անհապաղ քեզի տեղեկացնեմ, և որ ահա՛ կը կատարեմ։

Առաջին. անմիջապես կազմե՛ մը ցուցակ դանազան քաղաքներում ապրող քու ծանոթներեդ ու բարեկամներեդ, որոնց վրա անպայման կարող ես վստահիլ, որպեսզի և այդ անձերուն ուղարկվի բաժանորդագրության բլանկները ստանալու, իհարկե, հրատարակող խումբի կողմեն ու այդ խումբի անունով։ Եվ այդ կազմած ցուցակդ ուղարկե մեզի որքան կրնաս շուտ. այսպե՛ս վճռեց ժողովը. քեզ կը մնա հնազանդիլ։

Երկրորդ. ամենից առաջ ընտրե՛ ու սրբագրե՛ քու արդեն տպված բանաստեղծություններդ. որպեսզի երբ վերջը դուն քու անտիպ կտորներու վրա զբաղված կը լինես, ժողովը նույն միջոցին քրտինք թափե քու դուրս նետածներդ նորեն ներս առնելու։ Վա՜հ. ախր, ըսե՛նց ժողով ու ըսե՛նց հրատարակիչներ ո՛չ թե լապտերով, այլ աշխարհի բոլոր էլեկտրական լամպերը երթ մթացնես, նոցեն չես կրնար դաներ։

Գրե՛ նաև՝ մոտավորապես քանի երես (քու տպված բանաստեղծություններուդ երեսներովը) կը լինի քու անտիպ գրածներդ, կամ հնոտիի պես, բոլորովին փոտոխածներդ։ Գիտե՞ս, որ արձակներդ ալ ժողվելու ես, միայն սրական կտորները, իհարկե։

Դե՛, այլ ես պաշտոնական վերարկուս կրնամ հաներ ուսերես։ Եվ առաջին բառը, որ պիտի ըսեմ ա՛յն է, որ սոսկալի անշնորհքն ես. ես անհամբեր քեզմե լուրի կ'ըսպասեմ, իսկ դուն կը շարունակես քու պատմական անդորր լռությունը։ Հա՛, երեկ չգիտեմ ինչպես խոսք դարձավ կինդ ըսավ. որ մի օր տասն անգամ նկարեր ես մի աղջկան և դիտավորություն ես ունեցել ինձ ուղարկելու. թե ինչ աղջիկ է, հասկնալը դժվար չեղավ. բայց որ նկարը չես ուղարկած կը ցավիմ, թեև արդեն ծիշ մը ուշ, իհարկե. որ կ'ըսեմ անշնորհք ես։

Ես դեռ միշտ այն միամիտ հույսովն եմ, որ այսօր կամ վաղը քեզմե նամակ եմ ստանալու. և այդ ողորմելի հույսով ալ կը բարևեմ ու կը համբուրեմ քեզի։

Լեոնդ

1. Թվագրվում է ըստ նամակի բովանդակության։

ПИСЬМА ЛЕВОНА ШАНТА ОВАНЕСУ ТУМАНЯНУ

Г. А. АЗНАВУРЯН

(Резюме)

Богато эпистолярное наследие Левона Шанта (1869—1951). Он поддерживал переписку с такими деятелями армянской культуры, как О. Туманян, Ав. Исаакян, А. Чопанян, С. Лисицян и многие другие. До нас дошло много писем Шанта, адресованных Ованесу Туманяну, из которых здесь впервые публикуются письма, относящиеся к 1902 г. Письма эти представляют интерес для изучения творчества обоих поэтов, а также литературного процесса того времени.

Публикуемые письма хранятся в Музее литературы и искусств им. Е. Чаренца (ф. Ованеса Туманяна).